

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ
Շիրակօ, ԻԼԼ.

Տարեկան տեղեկագիր՝ Հոկտեմբեր 1969

Սիրելի ծխականներ,

Եկեղեցւոյ մեր գործերու կատարման ընթացքին, տարի մը եւս բոլորեցինք, Աստուծոյ կամքով եւ մեր եկեղեցւոյ կից կազմակերպութեանց գործակցութեամբ, նաեւ մեր ժողովուրդին նիւթական եւ քարոյական աջակցութեամբ:

Որպէս հովիւ մեր պարտականութիւնն է, ըստ մեր կանոնադրութեան, նաեւ կեղեցական պաշտամունքներն ու խորհուրդները՝ Հայց. Եկեղեցւոյ կանոններուն եւ աւանդութեանց համաձայն՝: Էջ 32, յօդուած 42, հատուած Ա.:

Արդ, մենք կատարած ենք եկեղեցական պաշտամունքներ ամէն Կիրակի, ճրագալոյցի երեկոյեան պատարագ, Ս. Ստեփաննոսի կամ Ամերիկեան ծնունդի առաւօտեան պատարագ, Հայկական ծնունդի առաւօտեան պատարագ, եւ Եկեղեցւոյս Անուանակոչութեան առթիւ Ս. Պատարագ մատուցուած է եկեղեցւոյս մէջ: Պատգամաւորական ժողովի առթիւ Ս. Պատարագ մատուցած եմ ֆէրլոնի Ս. Ղեւոնդեանց Եկեղեցւոյ մէջ: Վէսթ Ալիսի, Սառլո Միլվոքիի, եւ Բէյսիի Հայց. Եկեղեցիներու անուանակոչութեանց առթիւ, Շաբաթ առաւօտներ պատարագած եմ: Մեծ պահոց ընթացքին հանգստեան ժամերգութիւն ունեցած ենք Ուրբաթ երեկոյներ: Քարոզները տրուած են Հայերէն եւ Անգլերէն լեզուներով:

Խորհրդակատարութիւններ ունեցած ենք ըստ հետեւեալին:

- Մկրտութիւններ 5, Պսակադրութիւններ 2, Թաղումներ 8, եւ մէկ հատ ալ Էվէնսթընի մէջ, Հայր սուրբին հիւանդութեան ժամանակ:
- Նշանադրութիւն 1, Ս. Հղորդութիւն Հիւանդաց 7:

Մեր պարտականութեանց մէծ կիյնայ նաեւ, նաեւ Այցելութիւններ տալ իր ծուխի ժողովուրդին եւ միթարել իր հօտին հիւանդները, կարօտեալները եւ սգաւորները՝: Յօդ. 42 հատուած Բ.

Կատարած ենք հետեւեալ այցելութիւնները:

- 21 այցելութիւններ հիւանդներուն տուները:
- 45 ,, ,, Հիւանդանոցները:
- 21 ,, Ցաւակցական մահերու պարագային:
- 60 ,, տունօրհնէքի առիթով:
- 10 գերեզմանօրհնէքներ:
- 185 հովուական այցելութիւններ:
- Ընդամէնը 342 այցելութիւններ:

Մեր պարտականութիւնն է ըստ կանոնագրին, նաեւ կատարել ծխական եւ Կիրակնօրեայ դպրոցներու հսկողութեան պաշտօնը՝:

1969-ին կանոնաւորաբար շարունակուեցաւ Հայերէն լեզուի ուսուցումը, թէ փոքրերուն եւ թէ մեծերուն համար: Սակայն այս տարի միայն մեծերու համար դասաւանդութիւն ունինք 8-ը աշակերտներով: Փոքրերուն դպրոց չենք կրցած սկսիլ, որովհետեւ աշակերտ չունինք:

Կիրակնօրեայ դպրոցը, կը յուսանք այս տարի աւելի լաւ արդիւնք կուտայ:

Պր. ճօրճ նահապետեանը նշանակեցինը Կիրակնօրեայ դպրոցի Տեսուչ եւ կը յուսանը որ միասին գործակցելով կրնանը աշակերտներու թիւը աւելցնել եւ հոգեւոր ուսուցում տալ մեր փոքրիկներուն, նաեւ սորվեցնել անոնց գիտելիքներ հայաստանեայց եկեցւոյ մասին:

Գիտէք որ անմիջական հսկողութիւն չեմ կրնար կատարել Կիրակնօրեայ դպրոցին վրայ, վասնզի նոյն պահուն պատարագի մէջ կ'ըլլամ: Սակայն շատ ուրախ կ'ըլլամ եթէ զիս միշտ տեղեակ պահեն իրենց գործունէութեան եւ ժողովներուն զիս ալ հրաւիրեն:

Յօդուած 42, հատուած 4-իմէջ կըսէ, ՚՚ Հսկել ներկայ կանոնադրութեան տրամադրութեանց, ծխական ժողովներու որոշմանց, Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդի հրահանգներուն եւ յանձնարարութեանց ճշգրիտ գործադրութեանց՚՚: Այս մասին կասկած չկայ որ քուրս ալ օրենքի տակ ենք եւ պէտք չէ որ կանոնազանց ըլլանք: Թէեւ մեր ատենապետը առաջնորդարանի յանձնարարութեան մէկուն չուզեր հնազանդիլ եւ ղրկուած նամակը իր քով պահած է եւ կ'ուրանայ թէ այդ նամակը իր քով չէ:

Յօդուած 42, հատուած 5՚՚ Տարին մէկ անգամ իր գործունէութեան տեղեկագիրը ներկայացնել ծխական ժողովին եւ Առաջնորդին՚՚:

Դուք լաւ գիտէք թէ ամէն տարի ինամուած կերպով կը պատրաստեմ տարեկան տեղեկագիրս եւ կը ներկայացնեմ ծխական ժողովին եւ օրինակ մըն ալ կը ղրկեմ Առաջնորդին:

Յօդուած 43-ը կ'ըսէ. ՚՚ Հովիւը կը նախագահէ ծխական Խորհուրդի եւ ծխական ժողովի նիստերուն՚՚: Միշտ ներկայ եղած եմ ծխական Խորհուրդի եւ ծխական ժողովներու որպէս Հոգեւոր Հովիւ եւ նախագահ: Ասոնցմէ՛ զատ նաեւ ներկայ եղած եմ, Երեց Տիկնաց Միութեան, Երիտասարդ Տիկնաց Միութեան, Երիտասարդաց Միութեան անդամական եւ վարչական ժողովներուն, ինչպէս նաեւ յանձնախումբերու ժողովներուն: Բացակայած եմ միայն հիւանդութեան կամ եկեղեցւոյ այլ մէկ կարեւոր գործին պատճառաւ:

Նաեւ մասնակցած եմ, Թեմական Պատգամաւորական Համագումարին եւ Եկեղեցականաց Համագումարին, Պօսթընի մէջ, Էյ, Սի, Վայ, Օի. Կանոնադրական համաժողովին, Տիթրոյթ. Միտ Վէսթի շրջանային եկեղեցականաց ժողովներուն, Միտ Վէսթի միջ եկեղեցական ժողովներուն:

Ներկայ եղած եմ եւ մասնակցութիւնս բերած ճետեքեալ եկեղեցական եւ համայնքային ձեռնարկներուն:

Կիրակնօրեայ դպրոցի ծննդեան Հանդէսին:

Երեց Տիկնաց Միութեան ծննդեան հաւաքոյթին:

Դստերը Վարդանանց ժողովին- բանախօսութեան:

Տեար Հայկ Բետեանի ի պատիւ, եկեղեցւոյս կողմէ տրուած ճաշկերոյթին. օրուան բանախօսը:

Սրբոց Ղեւոնդեանց յիշատակութեան- Վօքիկըն:

Տեար Հայկ Բետեանի հրաւէր ճաշին:

Սրբոց Վարդանանց Տօնակատարութեան եկեղեցւոյս մէջ-Օրուան Բանախօս:

Երիտասարդ Տիկնաց Թէյի հաւաքոյթին:

Երեց Տիկնաց Միութեան Միջինքի ճաշին:

Սեքաստացիներու Տարեկան ճաշկերոյթին:

Դստերը Վարդանանց ընկերային հաւաքոյթին:

Արտասահմանի Հետ Մշակութային Կապի Կոմիտեի փոխ նախագահ՝ Տեար Անդրանիկ Մարտիրոս-
եանի եւ ընկերակիցներուն ի պատիւ տրուած ճաշկերոյթին:

Արթնութիւն ի Քրիստոս-շաքաթավերջի փակման արարողութեան, պատշաճ պատգամով:

Երիտասարդ Տիկնաց Միութեան ընկերային հաւաքոյթին:

Լուսինէ Զաքարեանի երգահանդէսին:

Շրջանիս Եկեղեցականներու ձեռնադրութեան տարեդարձի ճաշերուն:

Ապրիլ 24-ի Յիշատակահանդէսին, որպէս բանախօս- Սառլթ Միլվօքի:

Երեց Տիկնաց Միութեան Մայրերու Օր՝՝ուան հաւաքույթին:

Երիտասարդ Տիկնաց Միութեան- Տէքօրամ- ցուցադրութեան:

Լրաբերի Օր՝՝ուան ճաշ-հաւաքույթին:

Հոգշ. Վազգէն Վրդ. Քէշիշեանի ծննդեան տարեդարձի անակնկալ ճաշկերոյթին, որպէս սեղա-
նապետ եւ բանախօս. Սառլթ Միլվօքի:

Երեց Տիկնաց Միութեան զարնանային անդամական պարտիզազնացութեան:

Երիտասարդ Տիկնաց կողմէ ի պատիւ Տիկ. Էլիզապէթ Լազարեանի տրուած ողջերթի ճաշին:

Եկեղեցւոյս Շինութեան տարեդարձի ճաշկերոյթին:

Սեբաստացիներու Տարեկան Հալօինի հաւաքոյթին:

Եկեղեցւոյս Տարեկան Տօնավաճարին- Պազար:

Երիտասարդ Տիկնաց Միութեան նորածեւութեան ցուցադրութեան ճաշկերոյթին:

Կոմիտաս Վրդ. ի եւ Յ. Թումանեանի 100ամեակի տօնակատարութեան-եկեղեցւոյս մէջ. բանա-
խօսութեամբ:

Հայաստանի անկախութեան տարեդարձին. բանախօսութեամբ:

Փրօֆ. Գէորգ Բրուտեանի-հայաստանէն-ի պատիւ տրուած ճաշկերոյթին:

Երիտասարդ Տիկնաց Միութեան ծննդեան Հաւաքոյթին:

Եկեղեցւոյս նոր Տարուան խրախմանքին:

Ասոնց վրայ կարելի է աւելցնել, Մկրտութեանց եւ ամուսնութեանց ընդունելութեանց
ճաշերու ներկայութիւն եւ մահերու առթիւ հոգեճաշերու մասնակցութիւն:

Հետեւեալ ձեռնարկները կազմակերպեցինք ընթացիկ տարուան մէջ:

Մեծ Պահոց մէջ ՝՝Արթնութեան Շաքաթ Քրիստոսով՝՝ եկեղեցւոյս Երիտասարդաց կազմա-
կերպութեան նախաձեռնութեամբ:

Վարդանանց Տօնակատարութիւն եւ ճաշ:

Կոմիտաս Վրդ. ի եւ Յ. Թումանեանի 100-ամեակի Տօնակատարութիւն եւ ճաշ:

Անցնող տարին ունեցանք հետեւեալ հիւր եկեղեցականները եկեղեցւոյս մէջ:

Գերշնորհ Թորգոմ Արք. Մանուկեան

Հոգշ. Վարուժան Ծ. Վարդապետ Գապարամեան

Հոգշ. Վազգէն Վրդ. Թաթոյեան

Հոգշ. Շնորհք Վրդ. Գասպարեան

Հոգշ. Վազգէն Վրդ. Քէշիշեան

Արժշ. Տամատ Քհնյ. Դաւիթեան

Բարեպաշտ նուիրատուներու առատաձեռն նուէրներով եկեղեցւոյս պատուհաններու ապա-
կիները գունազարդ նկարներով զարդարուեցաւ:

Ս. Խորանին համար արեւելեան գորգ մը:

Ս. Խորանին համար գրօշէ Ս. Սեղանի ծածկոցներ:

Նոր Հայերէն գրամբենայ:

Բիւրեղեայ երեք ելկտրական ջահեր:

ԼՈՒՍԱԽՈՐԻՉ, եկեղեցւոյ թերթիկը երկու լեզուներով, հայերէն եւ անգլերէն, շարունակած ենք լոյս ընծայել: Վերջին թիւը միայն անգլերէնով տպուած է, պատճառը աչքերու յոգնութիւնն է եւ մեքենագրած ժամանակիս աչքերու յոգնութիւնը գլխու ցաւ կը պատճառէ ինծի: Հայերէնով մեքենագրողի մը պէտք ունինք, այլապէս պիտի ստիպուինք թերթը միայն Անգլերէնով հրատարակել:

Որպէսզի եկեղեցին դրամ խնայէ, ժամանակ տրամադրած եմ որպէսզի մասնաւոր արտօնագրով եւ արժան կերպով ժողովուրդին ղրկուին թերթը եւ յայտարարութիւնները, մինչ ուրիշներ, մի քանի առիթներով, որպէսզի չի յոգնին, սուղ ձեւով ղրկեցին: Ես կը կարծեմ թէ եկեղեցին դրամը խնայողութեամբ պէտք է ծախուի:

ԳՐԱՍԵՆԵԱԿԻ գործերը կանոնաւորաբար կատարած ենք, նամակագրութիւններ, արձանագրութիւններ եւ պաշտօնական թղթակցութիւններ ժամանակին կատարուած եւ մասնաւոր տոմարներու մէջ պահուած:

ՏՐԱՏՈՒ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ թիւ 40 տոկոսով աւելցած է այս տարի 1 Սակայն դեռ անդամներ ունինք որոնք իրենց նիւթական պարտաւորութիւնները չեն կատարեր: Կը յուսանք որ անոնք ալ յաջորդ տարի կը միանան միւսներուն եւ նիւթապէս օգտակար կ'ըլլան եկեղեցւոյ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ.- Արտասահմանի հետ մշակութային կապի կոմիտէի հրաւերով, Յուլիսի 29-ին մեկնեցանք Հայրենիք: 40 օրեր վայելեցինք հայրենի կառավարութեան հիւրասիրութիւնը, այցելեցինք տեսարժան վայրերը եւ մասնակցեցանք դասախօսութեանց եւ քանախօսութեանց, միանալով արտասահմանէն հրաւիրուած ուսուցիչներու խումբին, մեծապէս աւելցնելով մեր հայրենասիրութիւնը եւ գիտելիքները:

Սեպտ. 7-ի Կիրակին, երրորդ անգամ ըլլալով այցելեցինք Էջմիածին եւ Վեհափառ Հայրապետի քարեհամ արտօնութեամբ, Ս. Պատարագ մատուցինք եւ քարոզեցինք Մայր Տաճարին մէջ: Ս. Պատարագէն վերջ Վեհափառը քահանայական լանջախաչ շնորհեց մեզի:

Վեհափառ Հայրապետը, նախ նամակով եւ ապա Էջմիածին անձնապէս փափաք յայտնեց որ, եթէ կը փափաքիմ մնամ Միւսուսի օրհնէքի հանդիսութեանց որպէս Էջմիածնի հիւրը: Սակայն նկատելով որ եկեղեցին վեց շաբաթ անհովիւ պիտի մնար, վերադարձայ գործիս եւ Սեպտ. 10ին արդէն Շիրակօ էի:

Հիւսիսային Կիւմրուկ մեզի համար է ինչպէս ուրախութիւնը: Երիկամուսնի քարերու պատճառով ստիպուեցանք 17 օրեր հիւանդանոց մնալու եւ որոշ գործողութեան մը ենթարկուելու համար: Ժամանակ մըն ալ տունը հանգստանալ պէտք եղաւ:

Աւետարանը կ'ըսէ թէ մեր ըրած գործերու մասին չխօսինք, հապա ըսենք թէ՛ անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտքերնիս էր ընել, ըրինք՝: Ես ալ չեմ սիրեր իմ ըրածներու մասին խօսիլ, սակայն կանոնագիրը կ'ըսէ թէ պէտք է տեղկազիր տամ ձեզի եւ Առաջնորդին եւ ուրիշ մէկ պատճառն ալ այն է որ, ոմանք կը կարծեն թէ եկեղեցականին գործը միայն Կիրակի օրեր երկու ժամ պատարագ ընել է: Բայց այդպէս չէ սիրելի քարեկամներ, եթէ


այդպէս ըլլար իրաւ մեր գործը շատ դիւրին եւ հանգիստ կ'ըլլար եւ շատ մարդիկ կ'ուզէին եկեղեցական ըլլալ: Որքան պէտք ունինք եկեղեցականներու եւ դժբախտաբար մեր նորահաս սերունդէն ոչ ոք կը փափաքի ըլլալ:

Ձեր ուշադրութեան կ'ուզեմ յանձնել հետեւեալ կարեւոր կետերը առ ի գործադրութիւն.

- 1.- Պէտք ունինք եկեղեցիին համար քարտուղարի մը, որ կարենայ 5 օր որոշ ժամեր զրասենեակ ըլլայ զրասենեակի եւ եկեղեցւոյ տպագրական գործերուն համար:
- 2.- Պէտք ունինք ժամկոչի մը եկեղեցւոյ մաքրութեան եւ հսկողութեան համար:
- 3.- Սրահը օգտագործելու եւ նիւթական հասոյթ ապահովելու համար յանձնախումբի մը կազմութիւնը անհրաժեշտ կը գտնեմ:
- 4.- Մշակութային Յանձնախումբ մը պէտք է ունենանք որպէսզի ժամանակին արժանավայել կերպով տօնենք մեր տօները եւ գործը մի քանի անձերու վրայ չծանրանայ:
- 5.- Լուսաւորիչ Թերթին համար յանձնախումբ մը որ պատասխանատու ըլլայ անոր տպագրութեան, քաղմագրութեան, հասցէագրման եւ փոսթ օֆիս տարուելուն:
- 6.- Ուսումնական Խորհուրդի մը կազմութիւնը շատ անհրաժեշտ է որպէսզի նոր ծրագիրներ եւ միջոցներ ի գործ դրուին հայերէն լեզուի դպրոցը վերսկսելու եւ յառաջացնելու համար:
- 7.- Յաւելում Հովիւին տարեկան ստացած վճարումին. Երեք տարիէ աւելի հոս եմ եւ երբէք յաւելում չեմ ստացած չեմ ալ ուզած: Կեանք նդած է եւ կը փափաքիմ որ տարուան սկիզբէն յաւելու տրուի հովիւին:

Վերջացնելէ առաջ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել եկեղեցւոյ կից կազմակերպութեանց եւ բոլոր անոնց որոնք բարոյապէս եւ նիւթապէս օգնեցին եկեղեցիին եւ հովիւին, Աստուծոյ փառքին եւ եկեղեցւոյ պայծառութեան համար:

Աստուած օրինէ ձեզ. ամէն:


Սարգիս Քհնյ. Գաշըզեան
Հովիւ եւ Նախագահ

Յունուար 4, 1970

Շիրակօ, ԻԼԼ.